-Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 62

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի .Մխչյան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-059-0238-0003 կադաստրային ծածկագրով 5.49545 հա մակերեսով հողամասն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր (ըստ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 1-ի N11 որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող)	03-059-0238-0003 կադաստրային ծածկագրով 5.49545 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 23 » «մարտի» 2022թ.